«ԵՐԵՎԱՆԻ ՆԵՐՍԵՍ ՄԵԾԻ ԱՆՎԱՆ

Հ.124 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ՊԼԱՆ

2022 – 2023 ուստարի

ԴԱՍԱՐԱՆ՝ V^ա

ՈՒՍՈՒՑԻՉ՝ Ա.ԱԶԱՐՅԱՆ

ԿՐԹԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.ՈՒՍՈՒՄՆԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՈՒՍՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Մշտական ուշադրության կենտրոնում պահել դասարանի վարքի և ուսման առաջադիմության հետ կապված խնդիրները:Աշակերտների մոտ զարգացնել արդեն իսկ ձևավորված բազմաբնույթ կարողություններ (կարգապահություն,մաքրություն,անձնական հիգիենա,համագործակցություն,փոխօգնություն) ,ներշնչել և զարգացնել հավատ սեփական ուժերի և կարողությունների նկատմամբ:Սերտ կապի մեջ լինել ծնողների հետ,ինչը կնպաստի աշակերտների թե՛ վարքի,թե՛ ուսման առաջադիմության բարձրացմանը:

2.ՀՈԳԵՎՈՐ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Աշակերտների մոտ սերմանել սեր և հարգանք քրիստոնեության նկատմամբ:Նույն նպատակով կատարել պատմական ակնարկ,որը կնպաստի հոգևոր դաստիարակության ձևավորմանը:Աշակերտներին հաղորդակից դարձնել հայ ժողովրդի ազգային ավանդույթներին և հոգևոր արժեքներին:

3.ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Աշակերտների մոտ ձևավորել և զարգացնել գեղագիտական ճաշակ:Այդ նպատակով զրույցի միջոցով նրանց հաղորդել տեղեկատվություն մարդկանց կյանքում գեղեցիկի դերի մասին,ինչպես նաև ընձեռել հնարավորություն ինքնարտահայտվելու:

4.ՌԱԶՄԱՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Աշակերտների մոտ սերմանել սեր և հարգանք հայրենիքի,ակնածանք հայ ազատամարտիկների և ֆիդայիների նկատմամբ:Ծանոթացնել հայ ազատամարտիկների կյանքի պատմությանը,քննարկել երեխաների ուշադրությունը կենտրոնացնելով բնավորության այնպիսի գծերի վրա,որտեղ ակներև է հայրենասիրությունը:

5.ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Նպաստել երեխաների ֆիզիկական պատրաստվածության զարգացմանը,բացատրել մարմինը ֆիզվարժությունների և հնարների միջոցով կոփելու կարևորությունը,ինչպես նաև նպաստել վնասակար սովորություններից զերծ մնալու կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը:

6.ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Աշակերտների մոտ սերմանել սեր աշխատանքի և աշխատավոր մարդու նկատմամբ,ձևավորել և զարգացնել աշխատանքային հմտությունները և կառուցողական մոտեցումը:Աշխատանքը աշակերտի կողմից պետք է դիտարկվի որպես կյանքի և գոյատևման աղբյուր:

7.ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Զրույցի միջոցով երեխաների մոտ ձևավորել հոգատար վերաբերմունք բնության նկատմամբ:Ներկայացնել բնապահպանական խնդիրներ,նշել դրանց վտանգավորության և բնության պահպանման կարևորության մասին:

Դպրոց – ընտանիք սերտ կապը նպաստում է երեխաների ավելի լավ սովորելուն,իսկ ընտանիքը հանդիսանում է պետության կորիզը:

ՈՒՍՈՒՄՆԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՇԱԲԱԹՆԵՐ	ՈՒՍՈՒՄՆԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ	ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏ	ՆՇՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ
I	Կազմակերպչական հարցերի քննարկում	1.09 – 3.09	
II	Դպրոցն իմ տունն է.դասասենյակի ձևավորում, դասարանի սանիտարահիգիենիկ վիճակի պահպանում, հերթապահության սահմանում	5.09 – 8.09	
III	Դասագրքերի, գրենական պիտույքների ստուգում	12.09-16.09	
IV	Մենք Հայկի թոռնիկներն ենք՝ անկախ Հայաստանի ապագան	19.09-23.10	
V	Տոնդ շնորհավո՛ր,սիրելի՛ ուսուցիչ	26.09 -5.10	
VI	Իմ սրտի մայրաքաղաք	10.10-14.10	
VII	Ազնվությունն իմ պատկերացմամբ	17.10-21.10	
VIII	Իմ դերը ընտանիքում	7.11 – 11.11	
IX	Հանդուրժողականությունը և ներելու կարողությունը որպես մարդկային հարաբերությունների նախասկիզբ	14.11-18.11	
X	Ինչ է ընկերությունը:Ինչպես լինել լավ ընկեր	21.11-25.11	
XI	Բնության պահպանության կարևորությունը մարդկանց կյանքում	28.11-2.12	
XII	Անվտանգության կանոնների պահպանումը երկրաշարժի ժամանակ	5.12-9.12	
XIII	Անվտանգ երթևեկության կանոնները	12.12-16.12	
XIV	Ամանորյա խառնաշփոթ	19.12-23.12	
XV	Ի՞նչ սառն են ձեռքերդ, Ձմե՛ռ	9.01-13.01	
XVI	[illegible]	[illegible]	

XVII	Հայոց բանակի առյուծասիրտ զինվորներին նվիրվում է...	23.01-31.01	
XVIII	Հայաստանի պաշտպանները երեկ, այսօր և վաղը	1.02 – 3.02	
XIX	Քարերի երկիր Հայաստան	6.02-10.02	
XX	Քաղաքավարությունը՝ մարդու կարևոր բնութագիր. բարեկիրթ շփում, հաղորդակցություն	13.02-17.02	
XXI	Անաղարտ պահենք մեր մայրենին Գրքերը մեր կյանքում	20.02-24.02	
XXII	Օգտակար և վնասակար սովորություններ	27.02 – 28.02	
XXIII	Դռները բացե՛ք,գարուն է գալիս	1.03-4.03	
XXIV	Մայր իմ սուրբ ու բարի...	6.03-10.03	
XXV	Համակարգիչը ընկեր է,թե թշնամի	13.03 – 17.03	
XXVI	Իմ իրավունքներն ու պարտականությունները	20.03-24.03	
XXVII	Ինչպես պետք է մեզ պահենք հասարակական վայրերում	3.04-7.04	
XXVIII	Մենք առողջ ապրելակերպի կոմնակիցներն ենք	10.04 – 14.04	
XXIX	Ու՞մ կուզեի նմանվել:Հայտնի հայերը	17.04-21.04	
XXX	Զրույց նվիրված Ցեղասպանության զոհերի հիշատակին	25.04-28.04	
XXXI	Պատերազմ տեսած մեծերը	1.05-5.05	
XXXII	Հաղթանակած մայիս	8.05-12.05	
XXXIII	Մարդու գործն անմահ է	15.05-19.05	
XXXIV	Իմ ձեռքբերումները	22.05 25.05	